2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

ՏԱՐՈՆ ՍԱՔՈՅԱՆ

2008 թ. օգոստոսյան պատերազմը Հարավային Կովկասում ակնառու փոխակերպումների պատճառ դարձավ: Մասնավորապես, Ռուսաստանն ամրապնդեց իր աշխարհաքաղաքական ազդեցությունն այդ տարածաշրջանում: Այդ պատերազմը մասամբ 2003 թ. Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի հեղափոխության» հետևանք էր, որն աստիճանաբար սրել էր ռուս-վրացական հարաբերությունները[1]: Ուստի, դե յուրե Վրաստանի սուբյեկտ Հարավային Օսիայի խնդիրը ուղղակի առիթ էր, որպեսզի ռուսական կողմն իր հարևան պետության դեմ ուժ կիրառի: ՌԴ-ն, հանդես գալով Հվ. Օսիայի ժողովրդի անվտանգության երաշխավորի կարգախոսով, որպես ուղղակի մասնակից ներգրավվեց արդեն իսկ սկիզբ առած վրաց-օսական բախումներում:

Ռուս-թուրքական հարաբերություններում այս պատերազմի ազդեցությունը նշանակալի է: Թուրքիան ի սկզբանե դրսևորեց զգուշավոր և կառուցողական դիրքորոշում, ինչն ընկալվեց որպես թուրքական արտաքին քաղաքականությունում փոփոխության նշան[2]: Պաշտոնական Անկարայի՝ ՌԴ-ի համար նպաստավոր կեցվածքը ըստ էության նոր փուլ էր ռուս-թուրքական հարաբերություններում: Բանն այն է, որ Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ և ԱՄՆ-ի դաշնակից, պետք է սատարեր Արևմուտքի շահերն ու քաղաքական դիրքորոշումը: Սակայն 2008 թ. օգոստոսյան զարգացումների ժամանակ Անկարան գործնականում հաստատեց 2004 թվականի ռուս-թուրքական համատեղ հռչակագրի տեսական կողմերը: Հաստատվեց նաև այդ հարաբերությունների կենսունակությունը մի շարք բնագավառներում ընդհանուր շահերի առկայության շնորհիվ: Կարող ենք արձանագրել, որ, չնայած աշխարհաքաղաքական հակասությունների գրեթե մշտական առկայությանը, ռուսական և թուրքական կողմերի միջև տնտեսական, քաղաքական և մի շարք այլ բնագավառներում համագործակցությունը հասել էր այնպիսի ծավալների, որ շատ դեպքերում դրանք դարձել էին երկուստեք պարտավորեցնող: Միանգամայն օրինաչափ է, որ տարբեր շահեր հե-

[1] «Տեղեկատվական անվտանգություն», «Նորավանք» ԳԿՀ, Եր., 2017, էջ 145:

[2] Տե՛ս **Бюлент А**. Турция и Южный Кавказ в 2008 г. // «Кавказ-2008». Ежегодник Института Кавказа. Ер., 2010, էջ 168:

տապնդող պետությունների միջև ծագում են տարաձայնություններ, սակայն երբեմն բարիդրացիական մթնոլորտը նպաստում է հաղթահարելու դրանք: Այս հանգամանքը ակներև էր հատկապես 2008 թ. օգոստոսյան գործընթացների ժամանակ: Խոսքն առաջին հերթին սև-ծովյան ավազանի և հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ ամերիկյան նկրտումների մասին է: Դրանք ակնհայտորեն դրսևորվեցին հենց ռուս-վրացական պատերազմի և դրան հաջորդած իրադարձությունների ժամանակ, երբ ԱՄՆ-ն, սատարելով վրացական կողմին, փորձեց ազդել ծավալվող գործընթացների վրա: Սակայն այդ ուղղությամբ Վաշինգտոնի փորձերը հանդիպեցին Թուրքիայի հակազդմանը: Մասնավորապես, Թբիլիսիին օգնության շտապող ամերիկյան ռազմանավերին թույլ չտրվեց մուտք գործել Սև ծով, իսկ Ռ. Թ. Էրդողանը հայտարարեց, որ իր երկիրը համերաշխ է Ռուսաստանի հետ[3]: Փաստորեն, ԱՄՆ-ն զրկվեց Վրաստանում ծավալվող գործընթացներին ուղղակիորեն միջամտելու հնարավորությունից, ուստի Սպիտակ տունը ստիպված եղավ սահմանափակվել ՌԴ-ի դեմ սոսկ քննադատական բովանդակությամբ քաղաքական հայտարարություններով: Թուրքիայի նմանօրինակ դիրքորոշումը, բնականաբար, գոհացնում էր Մոսկվային, քանի որ այն բխում էր բացառապես ռուս-թուրքական շահերից: Այստեղ հատկանշական է այն, որ Անկարան՝ որպես Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի առանցքային դաշնակիցներից մեկը, համարձակվեց ցուցաբերել միանգամայն ինքնուրույն դիրքորոշում, որն իսկական ազդակ եղավ Վաշինգտոնի համար: Այս հարցում թուրքական կողմի անզիջում կեցվածքը թերևս պայմանավորված էր նաև նրանով, որ Անկարան չկամեցավ կիսել Հարավային Կովկասում և սևծովյան ավազանում իր ազդեցության մասնաբաժինը նույնիսկ հիմնական դաշնակցի՝ ԱՄՆ-ի հետ: Հատկանշական է նաև այն, որ Հարավային Օսիայի նկատմամբ Վրաստանի կողմից ռազմական ուժի կիրառումը հիմնականում տեղի էր ունեցել ԱՄՆ-ի դրդմամբ, որը, սակայն, չէր ապահովել Թուրքիայի քաղաքական և տնտեսական շահերի անվտանգությունը Հարավային Կովկասում[4]: Սա ևս վճռորոշ նշանակություն ունեցավ հիշյալ գործընթացների նկատմամբ Անկարայի քաղաքական դիրքորոշման ձևավորման հարցում:

Օգոստոսյան պատերազմի գլխավոր արդյունքը Մոսկվայի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումն էր (2008 թ. օգոստոսի 26): Սակայն նույնիսկ այսքանով ռուսական կողմը չբավարարվեց. նրանց միջև կնքված «Փոխօգնության մասին» պայմա-

---

[3] Տե՛ս **Ходунов А.** Российско-турецкие отношения в 1991-2010 гг. // «Вестник РУДН». Серия Всеобщая история, 2016, № 4, էջ 94:

[4] Տե՛ս **Глазова А**. Внешнеполитические инициативы Турции на Южном Кавказе: успех или неудача? // Проблемы национальной стратегии, РИСИ, 2011, № 1 (6), էջ 67:

նագրերով այդ սուբյեկտների տարածքում պետք է տեղակայվեին նաև ռուսական ռազմակայաններ[5]: Ուստի տրամաբանական է, որ պատերազմից հետո էլ ռուս-վրացական հարաբերությունները չբարելավվեցին: Ավելին, Վրաստանի իշխանությունները ՌԴ-ն հայտարարեցին իրենց «գլխավոր սպառնալիք», ինչն ամրագրվեց «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգ»-ում[6]: Սույն համատեքստում Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական պատկերի փոփոխությունն անխուսափելի էր, որը պետք է ենթադրեր դրանում ներգրավված ուժային կենտրոնների դերակատարության չափի վերանայում: Ինչ վերաբերում է ռուս-թուրքական հարաբերություններին, ապա այդ միանգամայն նոր իրավիճակը ակամա փորձարկեց նաև դրանց ամրությունը: Թուրքիան ոչ միայն սատարեց Ռուսաստանի քայլերը, այլև փորձեց ստանձնել տարածաշրջանում հաշտարարի գործառույթներ՝ ցանկանալով շփման դաշտ բերել ռուսական և վրացական կողմերին: Թուրքիայի այդ քայլն արտահայտվեց «Կայունության և համագործակցության կովկասյան հարթակ»-ի ձևավորման վերաբերյալ առաջարկ-նախաձեռնությամբ, որին աջակցություն հայտնեց նաև Մոսկվան: Այդ քայլով Մոսկվան առաջին հերթին ձգտում էր միջազգային հանրությանը ցույց տալ խաղաղասիրական հակումներ, այն, որ պատրաստ է նաև կառուցողական երկխոսության, ինչն այդ ժամանակ նրան խիստ անհրաժեշտ էր: Բանն այն էր, որ ռուս-վրացական պատերազմի օրերին միջազգային և հատկապես արևմտյան քաղաքական գործիչներն ու ԶԼՄ-ները արտահայտում էին ընդգծված հակառուսական տեսակետներ, իսկ, օրինակ, ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը Ռուսաստանի գործողությունները որակեց «ոչ համարժեք ուժի կիրառում»[7]: Պետքարտուղար Ք. Ռայսը, իր հերթին, ՌԴ գործողությունները համեմատեց 1968 թվականին Չեխոսլովակիայում տեղի ունեցած իրադարձությունների հետ[8]: Ուստի այս պայմաններում Ռուսաստանի դրական վերաբերմունքը Թուրքիայի առաջարկին միանգամայն համապատասխանում էր առաջին հերթին տեղեկատվական դաշտի չափանիշներին:

Ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանն իր հոդվածներից մեկում հայտնել է հետևյալ տեսակետը. «Կարծում ենք, որ Ռուսաստանի դրական մոտեցումը ԿՀՊ-ի (Կայունության և համագործակցության պլատֆորմ – Տ. Ս.) նկատմամբ կրում է միայն մարտավարական բնույթ, քանի որ դժվար է պատկերացնել, թե այդ պետության աշխարհառազմավարա-

---

[5] Տե՛ս **Минасян С**. Пятидневная война августа 2008 г.: военно-политический анализ // «Кавказ-2008», էջ 139:

[6] Տե՛ս «В ожидании бури: Южный Кавказ». М., 2018, էջ 80, 88, 190:

[7] **Գ. Հարությունյան**, Հարավային Օսիայի շուրջ հակամարտության առանձնահատկությունները և հետևանքները, 13.09.2008 թ., http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=742 (մուտքը 22.02.2019 թ.):

[8] Տե՛ս **Чудакова А., Иващенко А.** Пражская весна: сорок лет и странные аналогии, 20.08.2008 г. // https://www.interfax.ru/russia/28092 (մուտքը՝ 22.02.2019թ.):

կան հեռանկարը պարունակում է Հարավային Կովկասում մեկ այլ ակտիվ դերակատարի, բացի իրենից»[9]:

Գ. Արշակյանի և Ա. Եղիազարյանի համահեղինակությամբ 2014 թ. լույս տեսած աշխատությունում նշված է հետևյալ միտքը. «Ամենայն հավանականությամբ, ՌԴ-ի դրական մոտեցումը պլատֆորմի նկատմամբ կրում էր միայն մարտավարական բնույթ, քանի որ ռազմավարական առումով նրա համար անթույլատրելի էր աշխարհաքաղաքական այլ դերակատարի՝ գլոբալ առումով մուտքը տարածաշրջան»[10]:

Հարթակի ձևավորման առաջարկը հնչեցրեց Թուրքիայի վարչապետ Էրդողանը 2008 թ. օգոստոսի 12-ին Մոսկվա կատարած այցի ժամանակ: Այն ենթադրում էր այդ նախագծում Ռուսաստանի, Թուրքիայի, ինչպես նաև հարավկովկասյան պետությունների ընդգրկումը: Թեև դիտարկվել էր հարթակում նաև ԱՄՆ-ի և ԵՄ-ի ընդգրկումը, սակայն ռուս-թուրքական վերջնական քննարկումներից հետո ընտրվել էր առաջին տարբերակը: Նախագծից ԱՄՆ-ին դուրս մղելու գաղափարը հավանաբար Ռուսաստանի պահանջով էր, քանի որ նա դրան դրական արձագանքեց[11]: Հատկանշական է, որ Թուրքիան նույնիսկ չդիտարկեց հարթակում իր հինավուրց հարևան Իրանի ներառումը, որի ազդեցությունը Հարավային Կովկասում անհերքելի է: Մինչդեռ դա կարող էր դառնալ բարի կամքի դրսևորում Թուրքիայի կողմից: Սա նաև միանգամայն խոսուն փաստ է Թուրքիա-Իրան հարաբերությունների էությունն օբյեկտիվ գնահատելու հարցում: Զարգացնելով սույն միտքը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ նշված փաստը վկայում է, որ հարավկովկասյան տարածաշրջանի զարգացումներում Թուրքիան իր հնարավորությունների սահմաններում ամեն կերպ փորձում էր խոչընդոտել իր աշխարհաքաղաքական հակառակորդ Իրանի մասնակցությունը տարածաշրջանային գործընթացներին: Զուգադրական վերլուծությամբ արձանագրենք, որ եթե Ռուսաստանի պարագայում Թուրքիան համակերպվել էր Հարավային Կովկասում իր դերի սահմանափակմանը, ապա Իրանի դեպքում նույնը ասել չենք կարող: Սակայն հեռանկարային առումով Հարավային Կովկասը Թուրքիայի համար միշտ էլ կարևոր է, ուստի ռուսական ուժի առջև Անկարայի նահանջը կլինի սոսկ ժամանակավոր և մարտավարական բնույթի:

Այսպիսով, հարթակի ձևավորման գաղափարին վիճակված չէր իրականանալու մի շարք օբյեկտիվ պատճառներով: Մասնավորապես. Վրաստանը հրաժարվում էր ՌԴ-ի հետ ցանկացած ձևաչափով շփում-

---

[9] **Ռ. Սաֆրաստյան**, Հարավային Կովկասում Թուրքիայի նոր նախաձեռնության մասին, 29.09.2008 թ., http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=739 (մուտքը 15.02.2019 թ.):

[10] **Գ. Արշակյան, Ա. Եղիազարյան**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Եր., 2014, էջ 169:

[11] Տե՛ս **Ռ. Սաֆրաստյան**, Թուրքիայի ակտիվացումը պայմանավորված է Ռուսաստանի ակտիվացմամբ, 22.12.2008 թ., https://hetq.am/hy/article/33946 (մուտքը՝ 19.02.2019 թ.):

ներից, քանի դեռ նրա զորքերը տեղակայված են իր տարածքում[12]: Կողմերի միջև լարվածությունն ավելի սրվեց, երբ 2008 թ. օգոստոսի 26-ին ՌԴ-ն պաշտոնապես ճանաչեց Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունը, իսկ արդեն սեպտեմբերի 2-ին վրացական կողմը խզեց դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ: Մինչդեռ այստեղ կարևորն այն էր, որ Թուրքիայի իշխանությունների կառուցողական առաջարկությունները միանգամայն տեղավորվում էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության օրակարգում: Վերջինիս համար Թուրքիայի դիրքորոշումը 2008 թ. օգոստոսյան գործընթացների վերաբերյալ ոչ միայն աշխարհաքաղաքական, այլ նաև բարոյական նշանակություն ուներ: ՆԱՏՕ-ի անդամ պետության նման դիրքորոշումը Մոսկվայի համար հույժ կարևոր էր: Սակայն կառուցողական նախաձեռնությունները բխում էին նաև Անկարայի շահերից, որը շահագրգռված էր Հարավային Կովկասում խաղաղության հաստատմամբ: Բանն այն է, որ նույնիսկ կարճատև պատերազմը և մի շարք ենթակառուցվածքների գործունեության ժամանակավոր դադարը կաթվածահար արեցին ողջ տարածաշրջանի բնականոն կյանքը: Ուստի թուրքական նախաձեռնությունները բնավ պատահական չէին նաև տնտեսական առումով[13]: 2008 թ. վրաց-օսական, այնուհետև ռուս-վրացական բախումները գործնականում ցույց տվեցին վրացական տարածքի խոցելիությունն ու Թուրքիայի համար խիստ կարևոր՝ Ռուսաստանն ու Հայաստանը շրջանցող էներգակիրների արտահանման համար անհրաժեշտ այլընտրանքային ուղիների բացակայությունը: Մինչդեռ նման ֆորսմաժորային իրավիճակներում Հայաստանի տարածքը՝ որպես այլընտրանքային ուղի, կարող էր նախընտրելի լինել էներգակիրների անարգել արտահանման հարցում շահագրգիռ բոլոր կողմերի համար (ԵՄ, Թուրքիա, Ադրբեջան): Ուստի, թերևս նաև այս հանգամանքով էր պայմանավորված մասնավորապես ԵՄ-ի, իսկ որոշ վերապահումներով նաև Թուրքիայի դրական դիրքորոշումը 2008-2009 թթ. հայ-թուրքական շփումներին:

Հարթակի ստեղծման գաղափարն ու դրանում Հայաստանի ներառումը մեր երկրի համար միանգամայն ընդունելի էր՝ հատկապես հաշվի առնելով այդ նախագծի նկատմամբ Մոսկվայի դրական դիրքորոշումը: Բանն այն է, որ Սերժ Սարգսյանի նախագահության սկզբնական շրջանում հայկական կողմը ԹՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղիներ էր փնտրում, ուստի հարթակի ձևավորման թուրքական նախաձեռնությունները հայկական կողմի համար Անկարայի հետ կառուցողական շփում վարելու մի հնարավո-

[12] Տե՛ս **N. Mikhelidze**, After the 2008 Russia-Georgia war: Implications for the Wider Caucasus and Prospects for Western Involvement in Conflict Resolution / Documenti Instituto Affari Internazionali, Roma, 2009, էջ 12:

[13] Տե՛ս **А. Глазова**, նշվ. աշխ., էջ 70-71:

րություն էին: Բացի այդ, հարթակի ձևավորման նախաձեռնությամբ Անկարան փորձում էր ընդգծել նաև իր աշխարհաքաղաքական նշանակությունը Հարավային Կովկասում ծավալվող զարգացումներում: Չնայած այդ պատերազմի պատճառով Թուրքիայի կրած ֆինանսական կորուստներին՝ հարավկովկասյան տարածաշրջանում նոր փոխակերպումները նրա քաղաքական և տնտեսական դերի մեծացման որոշակի հեռանկարներ բացեցին: Ռուս-վրացական հարաբերությունների խզման պատճառով Վրաստանի արտաքին քաղաքականությունում ստեղծվել էր որոշակի վակուումային իրավիճակ: Սա հնարավորություն էր Թուրքիայի համար, քանի որ Վրաստանը և նրա ընտրած արտաքին քաղաքականությունը շարունակում էին առանցքային նշանակություն ունենալ տարածաշրջանային զարգացումներում: Ստեղծված իրավիճակը անխուսափելիորեն պետք է ենթադրեր Թբիլիսիի արտաքին քաղաքական կողմնորոշումը դեպի իր արևելյան հարևանը: Ընդ որում, սրա համար առկա էին նաև միանգամայն օբյեկտիվ նախադրյալներ: Մասնավորապես, ինչպես նշվեց վերը, Ռուսաստանի հետ բախումը Թբիլիսիին դրդեց ավելի մերձենալու իր մյուս անմիջական հարևան Թուրքիայի հետ: Վերջինիս աշխարհաքաղաքական դերը Վրաստանի համար կարևորվում էր նաև նրանով, որ Թուրքիան կարող էր իր չափով նպաստել Հյուսիսատլանտյան դաշինքի հետ այդ երկրի հարաբերությունների զարգացմանը՝ մասնավորապես հետագայում անդամակցելու ձգտմանը: Վրաստանի այդ ձգտումները խրախուսում էր ԱՄՆ-ը[14]: Թեև օգոստոսյան պատերազմից հետո թուրք-վրացական հարաբերություններում նկատելի էր որոշակի սառնություն, սակայն Թուրքիայի աշխարհաքաղաքական նշանակությունը նրա պատմության մեջ ոչ առաջին անգամ խաղաց զգալի դեր: Մասնավորապես, Թուրքիան ի տարբերություն իր արևմտյան դաշնակիցների, չէր քննադատել Ռուսաստանի գործողությունները Վրաստանի նկատմամբ (ռազմական ուժ կիրառելը, Աբխազիայի ու Հվ. Օսիայի անկախությունը ճանաչելը, դրանց տարածքում ռազմական ուժեր տեղակայելը և այլն), այլ սահմանափակվել էր սոսկ ձևական ու ծեծված՝ «իրադարձությունների վերաբերյալ մտահոգության», «Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման» և «հակամարտության խաղաղ ճանապարհով կարգավորման» դիվանագիտական հնարքներով[15]: Այս ամենից բացի, 2008 թ. օգոստոսին ամերիկյան ռազմանավերի մուտքը Սև ծով խոչընդոտելը ևս առաջացրել էր Վրաստանի հիասթափությունը Թուրքիայից: Այս առումով պաշտոնական Թբիլիսին Թուրքիայի գործողությունը-

[14] Տե՛ս **Райс К.** Мы поддерживаем стремление Грузии в НАТО. 10.07.2008 г. // https://www.vesti.ru/doc.html?id=193657&cid=9 (մուտքը՝ 22.02.2019թ.):

[15] Տե՛ս **A. Babacan**, Türkiye Cumhuriyeti Dişişleri Bakanliği // NO: 144 – 10 Ağustos 2008, «Dişişleri Bakani Sayin Ali Babacan'in Gürcistan Dişişleri Bakani Eka Tkeşelaşvili ile Yaptiği Telefon Görüşmesi Hk», http://www.mfa.gov.tr/no_144---10-agustos-2008_-sayin-ali-babacan_in-gurcistan-disisleri-bakani-eka-tkeselasvili.tr.mfa (մուտքը՝ 25.04.2019թ.).

ները որակել էր «ոչ հաճելի էջ թուրք-վրացական հարաբերություններում»[16]: Ուշագրավ է այս առումով Ռ. Թ. Էրդողանի մեկնաբանությունը. «Ամերիկան մեր դաշնակիցն է, իսկ Ռուսաստանը՝ կարևոր հարևան: ՌԴ-ն մեր թիվ մեկ առևտրային գործընկերն է: Մեր էներգիայի 2/3-ը մենք ստանում ենք ՌԴ-ից: Մենք գործում ենք մեր ազգային շահերին համահունչ, ուստի չենք կարող անտեսել Ռուսաստանին»[17]:

Հարթակի ձևավորման գաղափարը նույնպես առաջացրեց Վրաստանի տարակուսանքը: Նախաձեռնության սին հեռանկարի մասին վկայում է այն իրողությունը, որ նույնիսկ Թուրքիայի այդ քայլից հետո էլ Ռուսաստանը չհրաժարվեց իր նպատակներից: Արդեն օգոստոսի վերջին դե յուրե արձանագրվեց վրաց-օսական հակամարտությունում ռուսական միջամտության գլխավոր և իրական շարժառիթը. պաշտոնական Մոսկվան ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը: Այսպիսին եղավ ռուս-վրացական բախման շոշափելի արդյունքը տարածաշրջանի համար:

Այսպիսով, վերոգրյալ իրադարձությունների վերլուծությունը պարզորոշ ցույց է տալիս, որ պաշտոնական Մոսկվան լոկ առերես էր իր հավանությունը տվել հարթակ ձևավորելու Թուրքիայի գաղափարին, ինչն իրեն խաղաղասիրական համբավ տալու և շիկացած միջազգային իրադրությունը հանդարտեցնելու նպատակ էր հետապնդում: Բացի այդ, Ռուսաստանի համար խիստ կարևոր էր, որ ՆԱՏՕ-ի անդամ որևէ պետությունից կառուցողական առաջարկներ ստանա, ու դրանց շուրջ լինեն քննարկումներ (անկախ վերջնական ելքից), որոնք, հակառակ Արևմուտքի կամքի, այնուամենայնիվ ունեցել են լեգիտիմ բնույթ և նշանակություն: Թուրքիայի վերաբերյալ պետք է նշենք, որ թեև նա ՆԱՏՕ-ի անդամ է, այնուհանդերձ վրաց-օսական և ռուս-վրացական զարգացումների առնչությամբ նրա քայլերն ու դրանց շարժառիթները էականորեն տարբերվում էին իր ռազմավարական դաշնակիցների դիրքորոշումներից ու շահերից: Բացի այդ, թեև տարածաշրջանում ռուսական ազդեցության ընդլայնումը բնավ չէր բխում Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերից, այնուամենայնիվ նա չկամեցավ ՌԴ-ի հետ առճակատմամբ ի ցույց դնել իր թույլ ու խոցելի կողմերը: Ուստի Թուրքիայի առաջ քաշած «Կայունության և համագործակցության կովկասյան հարթակ»-ի ձևավորման գաղափարը սոսկ դեկլարատիվ էր, ինչը, թերևս, ի սկզբանե էլ այդպես էին համարում նույնիսկ Անկարայում: Պարզապես պետք է հասկանալ, որ հիշյալ զարգացումների պայմաններում Թուրքիայի բացարձակ լռությունը մեծ քաղաքականությունում կընկալվեր որպես թուլության դրսևորում: Ուստի հարթակի ձևավորման գաղափարն առաջ քաշելով՝ Թուրքիան իրականում ընդամենը փորձում էր փրկել իր «դեմքը»: Սակայն պետք է

[16] **Գ. Արշակյան, Ա. Եղիազարյան**, նշվ. աշխ., էջ 172-173:
[17] Նույն տեղում, էջ 173:

նշենք, որ վերոհիշյալ իրադարձությունների ընթացքում Թուրքիայի ընտրած դիրքորոշումը նաև անհրաժեշտ հող նախապատրաստեց հետագայում ռուս-թուրքական հարաբերությունների առավել խորացման համար: Արդյունքում արդեն 2009 թ. փետրվարին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց ռազմավարական նշանակության մեկ այլ փաստաթուղթ:

Բանալի բառեր – *օգոստոսյան պատերազմ, Հարավային Կովկաս, «Կայունության և համագործակցության կովկասյան հարթակ», ռուս-թուրքական հարաբերություններ, ռազմավարական գործընկերություն*

ТАРОН САКОЯН – ***Влияние августовской войны 2008 года на российско-турецкие отношения***. – В статье рассмотрены меры, предпринятые Россией по ходу августовской войны и в последующий период. Особое внимание уделено анализу позиции, которую заняла во время грузино-российского конфликта Турция и которая существенно повлияла на дальнейшее развитие российско-турецких отношений. После войны уровень стратегического партнёрства между двумя странами ещё более углубился.

Ключевые слова: *августовская война, Южный Кавказ, «Платформа стабильности и сотрудничества на Кавказе», российско-турецкие отношения, стратегическое партнёрство*

TARON SAKOYAN – ***The Influence of the August War in 2008 on Russia-Turkey Relations***. – The article deals with those actions and measures which were taken by Russia during the August War in 2008 and afterward. Special attention is paid to the analysis of the position of Turkey towards the above-mentioned events, which significantly affected the Russian-Turkish relations and their further development, deepening the level of the strategic partnership between the parties.

Key words: *August War, South Caucasus, the Caucasus Stability and Cooperation Platform, Russia-Turkey relations, strategic partnership*

Ներկայացվել է՝ 03.06.2019
Գրախոսվել է՝ 31.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019